

Մ. ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԳԻՏԱԿԱՆ ՍԵՍԻԱՆ

1957 թ. մայիսի 16—17-ին տեղի ունեցավ Մ. Աբեղյանի անվան Գրականության ինստիտուտի գիտական սեսիան, որը նվիրված էր հայ հին, նոր, ինչպես և սովետական շրջանի գրականության մի քանի հարցերին:

Սեսիայում բացման խոսք է ասում ինստիտուտի ղեկավար ընկ. Գ. Հովնանը, որը համառոտակի բնութագրում է գեղությունները:

Ակադեմիկոս Ա. Կարինյանը՝ ղեկավարվելով լենինի «Գեղեցիկի հիշատակին» հոդվածում նշված Ռուսաստանի ռեոլյուցիոն շարժման երեք էտապների, երեք սերնդի պերիոդիզացիայի սկզբունքներով, «19-րդ դարի 20—40-ական թվականների հայ լուսավորիչների գաղափարախոսության բնութագրման շուրջ» խորադիր կրող իր գեղության մեջ մանրամասն պարզաբանում է Հայաստանը Ռուսաստանին միացվելու պրոգրեսիվ նշանակությունը հայ ժողովրդի հետագա կյանքի տնօրինման գործում: Անդրկովկասում Ռուսաստանի մղած պատերազմները մահացու հարվածներ են տալիս արևելյան ֆեոդալական-խանական կարգերին և դրանով ուղի հարթում տնտեսական նոր ձևերի զարգացման համար: Ռուսաստանը ջանալով Անդրկովկասում իր դիրքերն ու իշխանությունը ամրապնդել, մի շարք միջոցառումներ է ձեռնարկում (խնդիրների պատրաստում, զարգացնել ու թափափումներ հիմնադրում և այլն), որոնք օբյեկտիվորեն խթան են հանդիսանում կովկասյան ժողովուրդների առաջընթացի համար:

Հայ ժողովրդի բոլոր պրոգրեսիվ տարրերը ջերմորեն օժանդակում էին Ռուսաստանին: Այս տեսանկյունով էլ գեղությունը բնութագրում է հայ լուսավորիչների (Ս. Արուսյանի, Մ. Թադևոսյանի և այլոց) աշխարհայացքը, որոնք մեծ համակրանքով են վերաբերվել ղեկի Ռուսաստանը: Հայ լուսավորիչների շարքերը, նշում է Ա. Կարինյանը, իհարկե միաձուլվել են եղել, իսկ նրանցից ոմանք բնագիտական խոսք են ասել ցարական կարգերի նկատմամբ: Արուսյանը բնագիտել է ցարական չինովնիկությունը, իսկ Թադևոսյանը համակրել ղեկարդիստներին:

Բանասիրական գիտ. թեկնածու ընկ. Ա. Ինճիկյանը գեղություն է «Հ. Ալամդարյանի գրական ժառանգությունը» թեմայով: Ջեղությունը համառոտակի բնութագրում է հայ նոր գրականության առաջին քնարերգու Հ. Ալամդարյանի ստեղծագործությունը. նա տիպական ներկայացուցիչն էր բեկմկան այն ժամանակաշրջանի, որ ապրել է հայ ժողովուրդը անցյալ դարի 20—30-ական թվականներին: Պարսկական լծից ձերբազատված հայ ժողովուրդը մեծ ճիգ էր գործ դնում թոթափելու նաև միջնադարյան խավարի մտավոր գերության կապանքները: Հ. Ալամդարյանը իր կարճատև կյանքը նվիրեց հարազատ ժողովրդի այս ձգտումների իրականացման վեհ գործին: Ջեղությունը հիշատակում է, թե ինչպես նա 1826—1827 թթ. ռուս-պարսկական պատերազմի ժամանակ եռանդուն մասնակցություն է ունենում առաջին հայ կամավորական ջոկատի («Հայոց զորքի») կազմակերպման գործում և «ամենասիրելի հայրենեաց» փրկությունը «յերկաթի հնոցէ պարսկական բռնութեանց» համարում է «զարագլուխ ազատութեան և երանութեան մերոց ապագայից», վեր է հանում ռուս առաջավոր մտածողներ ու գործիչներ Գրիբոեդովի, Պուշկինի և ուրիշների հետ: Ալամդարյանի ունեցած սերտ կապերը, խոսում է նրա հասարակական-մանկավարժական գործունեության մասին: Փաստական նոր տվյալների հիման վրա Ա. Ինճիկյանը մի քանի ճշտումներ է կատարում Ալամդարյանի մասին գոյություն ունեցող գրականության մեջ, լուսաբանում է հատկապես «Երեսնամյա Ներսիսեան զարգացի» ժողովածուի մեջ տպագրված մի քանի բանաստեղծությունների՝ Ալամդարյանի գրչին պատկանելու, «Հռատամիզ և Ջենոբիա» ողբերգության գրության ժամանակի և հրատարակության հարցերը, բերում

է նոր տվյալներ՝ Ալամդարյանի տաղերից մի քանիսի ստեղծագործական ուսումնաթյան և նրանց տարածման վերաբերյալ:

Հայ ժողովրդական բազմաթիվ առածների ու ասացվածքների գրավոր աղբյուրների բացահայտմանն էր նվիրված բանասիրական գիտ. թեկնածու ընկ. Ա. Ղանալանյանի «Հայկական առածների հնագույն գրավոր աղբյուրները» գեկուցումը:

Ինչպես ուրիշ երկրներում, այնպես էլ Հայաստանում բանավոր ձևով ստեղծված առածների ու ասացվածքների հետ միասին, որոնք կազմել են ժողովրդի ավանդական բանահյուսության տվյալ ժանրի հիմնական հարստությունը, գոյություն են ունեցել նաև ինքնուրույն ու թարգմանական գրավոր աղբյուրներից առաջ եկած առածներ ու ասացվածքներ: Դրանց համար նյութ են ծառայել տարբեր դարերի աշխարհիկ ու կրոնական, պատմական ու փիլիսոփայական գանազան գրքեր: Վերջիններիս մեջ առկա բազմաթիվ իմաստալից արտահայտություններ, պատկերավոր ասույթներ ու թեմատիկ խոսքեր, տարբեր ուղիներով ու ձևերով մուտք գործելով բանավոր ավանդության մեջ և ձեռք բերելով բանահյուսական գույն ու երանգ, ժամանակի ընթացքում դարձել են ժողովրդական առածներ ու ասացվածքներ:

Ընկ. Ղանալանյանը այս տեսակետից ժողովրդական առածների ու ասացվածքների համար որպես հիմնական գրավոր աղբյուրներ հիշատակում է Հին ու Նոր հտակարանները, անտիկ աշխարհի փիլիսոփաների աֆորիզմները և Խիկարի «Պատմությունը»: Վերոհիշյալ հուշարձաններից սերող հարյուրավոր այնպիսի իմաստալից արտահայտություններ ու աֆորիզմներ են մտել հայ ժողովրդի բնաշխարհիկ առածների ու ասացվածքների շարքը, որոնց մեջ մեր ժողովուրդը գտել է իրեն հուզող հասարակական, բարոյական, կենցաղային, կրոնական շատ հարցերի պատասխանները: Դրանք հարազատ ու հասկանալի են եղել նրան, որովհետև իրենց իդեոմատիկ ձևով, պատկերավոր, դիպուկ ու սուր խոսքով կապված են եղել հին աշխարհի մի քանի ժողովուրդների բանավոր ստեղծագործության ավանդների հետ:

Դրականության պատմության համար կարևոր նշանակություն ունեն պարականոն (անկանոն կամ անվավեր) այն գրքերն ու գրույցները, որոնք արտաքին բոլոր կողմերով ամենից ավելի կապված լինելով կանոնական գրքերին, ըստ էության շատ են հեռացել նրանց գաղափարախոսությունից: Բանասիրական գիտ. թեկնածու Մ. Ավդալբեկյանի «Պարականոնները հայ հին գրականության մեջ» գեկուցումը նվիրված էր պարականոնների գաղափարական և գեղարվեստական վերլուծությանը:

Պարականոնների հնու.թյունը հայ գրականության մեջ արտացոլված է դեռևս հինգերորդ դարի հեղինակներ՝ Աղաթանգեղոսի, Կորյունի, Մ. Խորենացու և Եղիշեի գործերում:

Պարականոն գրույցները հարստացնում են միջնադարյան գրականությունը մարդկային ներաշխարհի դրսևորումներով: Կանոնական սյուժեները, կերպարները ստանում են միանգամայն նոր բովանդակություն ու մեկնաբանություն, օժտվում են մարդկային բնավորության գծերով:

Պարականոնները ներթափանցված են ժողովրդական բանահյուսության տարրերով, կենդանի խոսակցական լեզվով, աշխույժ, սրամիտ գիտլոգներով: Այս հատկանիշներով պարականոն գրույցները, շնայած իրենց կանոնական սահմանափակության, ռեալ կյանքի ու հատկապես մարդկային հոգեբանության խոր վերարտադրությամբ դուրս են գալիս պաշտոնական գրականության սահմաններից և կամա թե ակամա դառնում պաշտոնական գաղափարախոսությունից տարբեր, իսկ երբեմն և նրան հակադրվող ստեղծագործություններ: Ընկ. Ավդալբեկյանը որպես օրինակ վերլուծում է տարբեր տիպի մի քանի պարականոններ («Վասն դալստեանն մոգուցն», «Մանկութիւն Յիսուսի», «Յովակիմ և Աննա»), զույգ տալիս նրանց ճանաչողական արժեքը, գեղարվեստական առանձնատկությունները:

Բանասիրական գիտ. թեկնածու ընկ. Ս. Աղարաբյանը հանդես է գալիս «Ակսել Բակունցի ստեղծագործության բնութագրման շուրջը» թեմայով:

Սովետահայ արձակի վարպետներից՝ Ակսել Բակունցի գրական ժառանգության ուսումնասիրությունը մեր գրականագիտության այժմեական խնդիրներից մեկն է: Ընկ. Աղարաբյանը իր գեկուցման մեջ ղենելով այս հարցը, փորձում է գնահատել, բնութագրել Բակունցի ստեղծագործությունը: Բակունցի արվեստի ինքնատիպությունը ցույց է տալիս, թե ինչպես նա՝ դաստիարակվելով հայ դասական գրականության դպրոցում, հավատարիմ մնալով նրա հիմնական ավանդներին, այդ թվում և նրա հուշակված բնաշխարհի կյանքը արտացոլելու գեղագիտական պահանջին, իր պատկերները, գույները, երանգները

քաղում էր ժողովրդական կյանքի հարստութիւնից, ուր և դարձավ նրա գրական անհատականութեան առանցքը:

Այսպէս Բակունցը պահպանեց հատուկ ակնածանքը, այրող սերը հայրենի բնութեան գրկում ապրող մարդկանց, ժողովրդական կենցաղի առողջ ավանդների, բնութեան ազատ դավանների կյանքի պրիմիտիվ ձևերի ու նրանց գեղջկական միամիտ, բայց արդար փիլիսոփայութեան նկատմամբ: Բնական աշխարհի հիացմունքը, սակայն, չմթագնեց նրա տեսադաշտը, նրան չտարավ այդ աշխարհի՝ Մթնաձորի ոսկեզօծման ուղիով: Նրա թախծի ու կարոտի երանդը նախ և առաջ մարդկային հոգու բարոյական առողջացման զգացման արտահայտութիւնն էր:

Բակունցի տաղանդը կապված էր հայ դյուղի, հայ հողագործի, չայաստանի պատմութեան հետ և նրա ստեղծագործութեան մեջ թախիծն ու կարոտը ծնվում էր այն հազվագյուտ սիրուց, որ նա տածում էր դեպի՝ հասարակ մարդիկ, դեպի ժողովրդական ներքին ազերը, որտեղից նա քաղում էր կյանքի իրական պոեզիան, մարդկային հոգու պարզ գեղեցկութիւնները, որտեղ նա ամենից ավելի խոր կերպով էր զգում ազգային խառնակները:

Բ. Չ.